

CONCOURS D'ENTREE 2022-2023/ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅԱՆ ՄԴՅՈՒՅԹ 2022-2023

ARMENIEN / ՀԱՅՈՑ ԼԵԶՈՒ

23/06/2022

Temps imparti / Ժամանակը: 150 minutes / 150 րոպե

Les dictionnaires ne sont pas autorisés. / Բառարանների գործածումն արգելվում է:

ԳՆԱՀԱՏՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ

Բոլոր առաջադրանքները կատարել տրամադրված հարցարանների համապատասխան բաժիններում՝ առանց ավելորդ անգամ արտագրելու:

Առաջադրանք 1. (11 միավոր)

1.1. առաջադրանքը գնահատվում է 9 միավոր: Յուրաքանչյուր սխալ կետադրման համար հանվում է 0,25 միավոր, յուրաքանչյուր սխալ ուղղագրության համար՝ 0,5 միավոր:

1.2. և 1.3. առաջադրանքների ճիշտ պատասխանները գնահատվում են 1-ական միավոր:

Առաջադրանք 2. (7 միավոր)

2.1. առաջադրանքի համար տրվում է 3 միավոր. յուրաքանչյուր ճիշտ պատասխան գնահատվում է 0,5 միավոր:

2.2. առաջադրանքի համար տրվում է 4 միավոր. յուրաքանչյուր ճիշտ պատասխան գնահատվում է 0,5 միավոր:

Առաջադրանք 3. (8 միավոր)

3.1., 3.2. առաջադրանքների համար տրվում է 3-ական միավոր. յուրաքանչյուր ճիշտ պատասխան գնահատվում է 0,5 միավոր:

3.3. առաջադրանքը գնահատվում է 2 միավոր. յուրաքանչյուր ճիշտ պատասխան գնահատվում է 1 միավոր:

Առաջադրանք 4. (8 միավոր)

4.1., 4.2 առաջադրանքները գնահատվում են 2-ական միավոր. յուրաքանչյուր ճիշտ պատասխան գնահատվում է 0,5 միավոր:

4.3. առաջադրանքը գնահատվում է 4 միավոր. յուրաքանչյուր ճիշտ պատասխան գնահատվում է 0,5 միավոր:

Առաջադրանք 5. (6 միավոր)

5.1. և 5.2. առաջադրանքների համար տրվում է 2-ական միավոր. յուրաքանչյուր ամբողջական ճիշտ պատասխան գնահատվում է 1 միավոր:

5.3. և 5.4. առաջադրանքների ճիշտ պատասխանները գնահատվում են 1-ական միավոր:

Յուրաքանչյուր հարակից սխալի համար հանվում է 0,25 միավոր:

Առաջադրանք 1 (11 միավոր)

1.1. Անհրաժեշտության դեպքում լրացնել տասերը և կեստադրել բնագիրը (9 միավոր):

Միջօրեից անց էր, և բարձր ու գույնզգույն լուսամուտներով սրահն ամբողջությամբ այնպես էր լույսից շողշողում, ասես ճառագայթե թափանցիկ աշտարակ լիներ: Թվում էր՝ այն միմիայն լուսամուտներից էր կազմված՝ շիկացած(,) վառ կարմիրով, դեղինով ու կանաչով հագեցած: Շողերն այնքան ուժեղ էին, որ գույները մաշկիդ վրա էիր գգում,(.) ասես երփնավառ լույսերի՝ երկնքից թափվող հորձանք լիներ: Շողերի արքայական հանդերձներով պարուրված՝ նա նստեց մի նստարանի՝ վայելելու տվնջյան լույսն անապակ: Այդպես նստած՝ նա հիշեց՝ վերջին անգամ երբ էր եղել այստեղ. իր մայրն էր բերել իրեն Փարիզի այս արվարձանը: Դա այն ընթացքում էր, երբ ոստիկանությունը իր հորն էր փնտրում: Այդ ժամանակ իրենք ողջ օրը եկեղեցիներում էին անցկացնում. դա նրանց ամենաապահով տեղն էր թվում, և առանձնապես ընտրություն էլ չունեին: Մերին այդպես ճանաչեց Փարիզի եկեղեցիների մեծ մասը, երբ կուչ էր գալիս ամենամութ անկյուններում՝ լույսից հեռու, և աղոթում էր: Մակայն որոշ ժամանակ անց սկսեցին լքտեսներ ուղարկել նաև եկեղեցիներ, և Նոտր Դամի մթությունն այլևս ապահով չէր: Այդ ժամանակ մոր ընկերները խորհուրդ էին տվել այս եկեղեցում պատսպարվել. ասում էին՝ այնտեղ մի շատ հուսալի սպասավոր կար: Մերին այն ժամանակ քայլեց դեպի շիկացած լույսը, որ, ոճրագործի պես փախչելով, դուրս է գալիս մութ թաքստոցից ոստիկանական լուսարձակների() անողոքաբար շլացնող լույսի տակ և նոր թաքստոց որոնում: Մերին մեկ առ մեկ վերհիշեց բոլոր դեպքերը՝ կապված եկեղեցու և լույսի ու մութի խաղի հետ:

1.2. Նշել այն շարքը, որի բոլոր բառերի բաղադրիչները գրվում են մեծատառով (1 միավոր):

- 1) ՀԱՐՈՒՆ ԱԼ ՌԱՇԻԴ, ԳԱՐԵԳԻՆ ՆԺԴԵՆ, ՓՈՔՐ ԱՄԻԱ, ՀՅՈՒՄԻՍՏԱՅԻՆ ԿՈՎԿԱՍ
- 2) ՊԱՆԱՄԱՅԻ ԶՐԱՆՑՔ, ՏՐԴԱՏ ՄԵԾ, ԻՐԱՆԻ ԻՍԼԱՄԱԿԱՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ, ՈՍԿԱՆ ԵՐԵՎԱՆՅԻ
- 3) ՄԵԾ ՀԱՅՔ, ՄՈՎՍԵՍ ԽՈՐԵՆԱՅԻ, ՆՈՒԲԱՐ ՓԱՇԱ, ԱՍԵՂԻ ՀՐՎԱՆԴԱՆ
- 4) **ԶԵՆՈՎ ՕՀԱՆ, ՏՐԴԱՏ ԵՐՐՈՐ, ՄԱՆ ՄԱՐԻՆՈ, ՍԼՈՎԱԿԻԱՅԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ**

1.3. Նշել այն շարքը, որի բոլոր բառերի բաղադրիչները գրվում են միասին (1 միավոր):

1) գյուղե(գյուղ), ազգ(ու)տակ, լույս(ընծայում), փոխ(նախարար), վեր(ընթաց)

2) պատ(շար), հուշ(ալբոմ), մեծից(փոքր), շուրջ(բոլորը), լեռնա(դահուկային)

3) ծափ(ծիծաղ), քարե(դարյան), օրն(ի)բուն, ափ(հանում), շին(հրապարակ)

4) հինգ(տոկոսանոց), թել(ասեղ), հարավ(արևմտյան), քար(կոծել), առ(միշտ)

2 . Առաջադրանք 2 (7 միավոր)

2.1. Դեմ դիմաց գրված բառերից մեկական արմատ և ցանկացած ածանց (խառն կարգով) ընտրելով (յուրաքանչյուր բաղադրիչ գործածել մեկ անգամ)՝ կազմել վեց բարդաձանցավոր բառ (3 միավոր):

Կողմնացույց	չվերթ	ք	չվացուցակ
մտապատկեր	բարեխիղճ	իկ	խղճմտանք
մարտակարգ	տասնհինգ	ություն	հնգամարտիկ/տասնամարտիկ
հետագիծ	բթամատ	ակ	մատնահետք
խոսնակ	երկկենցաղ	անք	երկխոսություն
պահասենյակ	բնություն	պան	բնապահպան

2.2. Ընդգծել այն բառերը, որոնցում ած հնչյունախումբն արմատ է (4 միավոր):

Կատարածու, տարածք, **անաձանց**, **ակնաձանք**, խորովածացու, **թևածել**, **նվագածություն**, սևակնած, **թեկնածու**, համատարած, **գործածել**, բազկատարած, խորշոմած, **համաձանցավոր**, արյունակալած, հողմահալած:

Առաջադրանք 3 (8 միավոր)

3.1. Ընտրել և գրել հոմանիշների վեց զույգ (3 միավոր):

Անզգայանալ, մեկնել, հնազանդվել, հենվել, մաքառել, հպատակվել, պարսավել, նախատել, կոթնել, մարտնչել, կարկառել, ընդարմանալ:

անզգայանալ - ընդարմանալ

մեկնել - կարկառել

հնազանդվել - հպատակվել

հենվել – կռթնել
մաքառել - մարտնչել
պարսավել – նախատել

3.2. Ընտրել և գրել հականիշների վեց զույգ (3 միավոր):

Կիզել, շտապել, հրճվել, համախմբել, հետամտել, արտաքսել, ջլատել, հապաղել, խուսափել, հյուրընկալել, վշտանալ, շիջել:

կիզել - շիջել
շտապել - հապաղել
հրճվել – վշտանալ
հետամտել – խուսափել
արտաքսել - հյուրընկալել
համախմբել – ջլատել

3.3. Գտնել երկու շարք, որոնցում դարձվածքների իմաստների սխալ բացատրություն կա (2 միավոր):

ա) դեմքը կորցնել- հեղինակագրկվել, դարն անցնել- հնանալ, դեմքը մթնել- վշտանալ, դրոշի տակ հավաքել- միավորել

բ) երեսը պինդ- անհամարձակ, երկու աչքով նայել-հետնել, երկինք բարձրացնել-խնկարկել, երկու խոսք - կարճ

գ) քարավան կտրել- ավագակություն անել, քիթը կախ- տրտում, քար կտրել- ապշել, քարը քարին դնել- շենացնել

դ) վարդի նման- բարեկեցիկ, վերջին շապիկը ծախել- սնանկանալ, վրա ընկնել- հասնել, վիզը ծռել- խնդրել

ե) ոտքի վրա- արթուն, ոգի առնել- ոգեշնչվել, ոտքը կախ գցել- հապաղել, ոտքերն ամպոտ- անսխալական

զ) օդ ու ջրի պես- անհրաժեշտ, ջուր պղտորել- կռիվ գցել, ջուր ծեծել- անիմաստ գործ անել, ջրեր հոսել- ժամանակ անցնել

Առաջադրանք 4 (8 միավոր)

4.1 Ընդգծել նախադասության մտքին համապատասխանող բառը (2 միավոր):

ա) Խավարի միջից դուրս եկավ մի խորհրդավոր (կերպար, **կերպարանք**) և դանդաղորեն շարժվեց դեպի վառվող կրակը:

բ) Թիթեղագործը (շառափով, **շաղափով**) անցքեր էր բացում թիթեղների վրա և վարպետորեն իրար էր ամրացնում դրանք:

գ) Հինավուրց անտառը (յուրովսանն, **յուրօրինակ**) աշխարհ է՝ լի անմեկնելի ոտնահետքերով ու շնչյուններով:

դ) (**Անակնկալի գալով**, անակնկալ գալով) որդու հայտարարությունից՝ ծնողները մի պահ կարկամեցին՝ չարտասանելով ոչ մի բառ:

4.2. Փակագծերում տրված բառերը տեղադրել նախադասությունների մեջ՝ դրանք ենթարկելով համապատասխան փոփոխությունների (2 միավոր):

Արեգակի **շողերը** թրթռում էին եկեղեցու գմբեթարդ տանիքին, երբ ժամհարը **բարձրացավ**¹ եկեղեցու՝ **սառույցով** պատած կտուրը՝ **հնչեցնելու** կոչնակը:

(բարձրանալ, սառույց, շող, հնչեցնել)

4.3. Ընտրել և ընդգծել ճիշտ տարբերակները (4 միավոր):

Կհամաձայնվեմ, իրավագանցներ, առանց որոշում, գիսաստղներ, մի՛ շտապեցնիր, ըստ ցանկությանը, **ասացի**, բազուկոսկրներ, թոնում ենք, միացրեցի, **խաչակնքել, պատշարներ**, ի հակառակ քեզ, բացի ընկերս, **ավանդամուկներ, կորչող, ձեզ պես**, հանձինս քեզ, **բազմաթիվ անգամներ**:

Առաջադրանք 5 (6 միավոր)

5.1. Նշել այն նախադասությունները, որոնցում խնդրառության սխալ կա, և ուղղել սխալները (2 միավոր):

ա) Հասնելով կյանքի մայրամուտին՝ նա իր ամբողջ ուշքն ու միտքը ուղղել էր միակ զավակի դաստիարակությանը:

բ) Երախտապարտ եմ այն անցորդիցն, որի անտարբերությունը չի վնասում բնությունը:

գ) Պետությունը պետք է սատար կանգնի բոլոր ազգաշահ ձեռնարկումների:

¹ Ընդունելի են նաև այլ ժամակաձևեր:

² 9-ից 8 տարբերակ նշելու դեպքում առաջադրանքը գնահատվում է 4 միավոր:

դ) Ինչու՞ ես խուսափում իմ հարցերին որոշակի պատասխան տալուց:

5.2. Նշել այն նախադասությունները, որոնցում համաձայնության սխալ կա, և ուղղել սխալները (2 միավոր):

ա) Ե՛վ ես, և՛ որդիս մտածում ենք գալիք օրերի մասին ու լցվում հավատով:

բ) Ինձ չի չեն անհանգստացնում ո՛չ ցուրտը, ո՛չ քաղցը. մենակության վախն է կրծում հոգիս:

գ) Թե՛ քաղաքներում, թե՛ գյուղերում խաղաղություն էր տիրում:

դ) Չարենցն այն բանաստեղծներից է, որ միշտ զարմացնում է են ստեղծագործությունների արդիականությամբ:

5.3. Նշել պարզ նախադասությունը բարդ ստորադասականի փոխակերպելու ճիշտ տարբերակը (1 միավոր):

Ճշմարիտ մտավորականի ամենացայտուն հատկանիշներից մեկը նրա՝ նաև այլոց կարծիքների հետ հաշվի նստելն է:

ա) Ճշմարիտ մտավորականի ամենացայտուն հատկանիշներից մեկն այն է, որ նա հաշվի է նստում նաև այլոց կարծիքների հետ:

բ) Ճշմարիտ մտավորականի հատկանիշներից մեկն այն է, որ նա հաշվի է նստում նաև այլոց ամենացայտուն կարծիքների հետ:

գ) Ճշմարիտ մտավորականի ամենացայտուն հատկանիշներից մեկն է, որ նա հաշվի է նստում նաև այլոց կարծիքներով:

դ) Ճշմարիտ մտավորականի հատկանիշներից ամենացայտունն այն է, որ նա հաշվի է նստում նաև այլոց կարծիքների հետ:

5.4. Նշել ուղղակի խոսքն անուղղակիի փոխակերպելու ճիշտ տարբերակը (1 միավոր):

-Եթե Դուք Ձեր եղբորը հրաման ունեք տալու կամ ուղարկելու լուր,- առաջարկեց այցելուն տանտիրոջը,- ասե՛ք, ես կհաղորդեմ:

ա) Այցելուն տանտիրոջն առաջարկեց, որ եթե նա իր եղբորը հրաման ունի ուղարկելու կամ տալու լուր, ասի, ինքը կհաղորդի:

բ) Այցելուն տանտիրոջն առաջարկեց, որ եթե նրանք իրենց եղբորը հրաման ունեն տալու կամ ուղարկելու լուր, ասեն, ինքը կհաղորդի:

գ) Այցելուն տանտիրոջն առաջարկեց, որ եթե նա իր եղբորը հրաման ունի տալու կամ ուղարկելու լուր, ասի, ինքը կհաղորդի:

դ) Այցելուն տանտիրոջն առաջարկեց, որ եթե նա իր եղբորը հրաման ունի տալու կամ ուղարկելու լուր, ասի, նա կհաղորդի: